ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆՑԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ռ. Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

Ստեփանոս Նազարյանցը բազմիցս անդրադարձել է հասարակական առաջադիմության հարցերին։ Պատմության ըմբռնման խնդրում հետևելով իր ժամանակի բուրժուական առաջավոր մտածողներին, նա գտնում էր, որ պետք է վերակառուցել, լուսավորել հայկական կյանքը ռուս ու եվրոպական առաջավոր ժողովուրդների օրինակով։

Ստեփանոս Նազարյանցը քննադատում էր հասարակության զարգացման կրոնաաստվածաբանական ուսմունքը և դրան տուրք տվող այն մտածողներին, որոնց ըմբռնմամբ «պատմությունը... չէ մարդկային հառաջադիմության և աստիճան առ աստիճան բարդավաճանրի հանդես, այլ մի դադարում, մեռյալ լիճ, eine Pfütze, Sumpf, Stagnation»[1]։ *Հայ լուսավորիչը գրտնում էր, որ հասարակության զարգացման ընդհանուր օրինաչափությանը ենթարկվում են բոլոր ժողովուրդները։*

Մարդկային պատմության, հասարակական առաջադիմության գիտական բացատրությունը առաջին անգամ տրվել է «Գերմանական գաղափարախոսության» մեջ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի կողմից։ Մարքսիզմի կլասիկները ցույց տվեցին, որ մարդկային հասարակության պատմությունը սկսվում է արտադրությունից։ «Հենց նյութական արտադրությունն է մարդուն տարբերում կենդանուց։ Մարդկանց կենդանիներից կարելի է տարբերել գիտակցությամբ, կրոնով, ընդհանրապես ինչով կամենաս։ Նրանք իրենց սկսում են տարբերել կենդանիներից, հենց որ սկսում են իրենց համար անհրաժեշտ կենսամիջոցներ արտադրել»[2]։

Մարդկային պատմության առաջին նախադրյալը անհրաժեշտ դոյամիջոցների արտադրությունն է։ Նազարյանցը փորձում էր ըմբռնել այդ բանը և հասարակական առաջադիմության գաղափարներին մոտենում էր որպես օրինաչափ մի պրոցեսի[3]։ Նա պայքարում էր տգիտության, խավարամոլության և նրանց դեմ, ովքեր չէին ընդունում հասարակական զարգացման անհրաժեշտությունը։ «Եվ որ կամին դոքա պատսպարել յուրյանց անձը, փրկություն գտնել այն տիեզերական կարգից որ ամենայն տեղ թագավորում է, որ և ասվում է կյանք, կենդանություն, շարժողություն, վերստին նորոգություն։ Ահա մարդկային կյանքի և աշխարհաշինության հիմնաքարը, որի վերա հաստատ-

---

1 Ստ. Նազարյան, Նամականի, Երևան, 1969, էջ 472։

2 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ֆոյերբախի մատերիալիստական և իդեալիստական հայացքների հակադրությունը («Գերմանական գաղափարախոսություն» գլխի նոր հրապարակումը), Մոսկվա, 1966, էջ 23։

3 Տե՛ս Ստ. Նազարյանց, Յաղագս փորձական հոգերանության ճառ, Մոսկվա, 1851, էջ 9։

վելով բարձրացել է մարդկության գրությունը,— գրում է Ստ. Նազարյանցը»[4]։ Նա գտնում էր, որ եթե խավարամոլները աչքերը բանան և «միտ դնեն պատմության ընթացքին», ծանոթանան այն փոփոխություններին, որոնք առաջացրել է ժամանակը մեծ գործ կազմելով պատմության մեջ, ապա այն ժամանակ կհասկանան, որ Նազարյանցի ցանկությունը թելադրվում է ոչ թե «յուր գլխով ու կամքով, այլ մարդկության և նորա հառաջադիմության կարգի և օրենքի անունով»[5]։ Նա հասարակական առաջադիմությունը համարում էր մի օրինաչափ պրոցես և գտնում էր, որ մարդկության պատմությունը հասկանալու համար պետք է հաշվի առնել հասարակական կյանքի նյութական և հոգևոր վիճակն ու պահանջները, նրանց փոխներգործությունը։ Հետևաբար, այս կամ այն ժողովրդի ներկայի որպիսության գաղտնիքը պետք է որոնել նրա անցյալի մեջ։ Ըստ Նազարյանցի որևէ անձնավորության ով լինելը բացահայտելու համար պետք է ուսումնասիրել նրա կյանքի պատմությունը, պատկերացում կազմել այն միջավայրի մասին, որտեղ մեծացել է, ծնողների մասին, որոնք դաստիարակել են նրան։ Ահա նույն ձևով էլ մի կողմ պետք է դնել բոլոր կանխակալ կարծիքները նաև ժողովրդի ինքնությունը ճանաչելու, ուսումնասիրելու ժամանակ։ «Անաչառապես քննել նորա գոյացության և աճելիության առիթները, այսինքն արմատը, հողը և օդի որպիսությունը, որոնց ազդեցության տակ դաստիարակվել է նա... Ամենայն ազգ,— շարունակում է Նազարյանցը,— թե՛ նորա պարծանքը և թե՛ նորա ամոթը, հետևանք է նորա պատմության. ասել է այն գործերի ու անցքերի, որք եղած են ազգի կյանքի մեջ»[6]։

Նազարյանցը անհրաժեշտ էր համարում առաջ տանել ազգի լուսավորության ու կրթության գործը ժամանակի պահանջներին համապատասխան։ Հենց դրա մեջ էլ նա տեսնում էր իր և ամեն մի ուսյալ հայի «ամենամեծ խընդիրը—խնդիրների խնդիրը»։ Նա գտնում էր, որ ժողովուրդը կարոտ է այժմ այլ ուսուցիչների, քան կարող էր տալ նրանց «խուցերի մեջ փակված, մարդկությունից բոլորովին օտարացած մի հասարակություն»։ 1869 թ. հուլիսի 21-ին Փիլիպոս Վարդանյանին գրած նամակում նա կոչ է անում «սուրը ձեռքին պատերազմել» այն տգետների դեմ, որոնք հավակնում են ուսուցանել ժողովրդին։ Նազարյանցը հորդորում է պայքարել հայ ազգի անունը ապականողների ու խայտառակողների դեմ. «ծուծկել այնպիսի մարդերի ամոթը, որ անպիտան են ազգին, մանավանդ թե թշնամի և վնասակար իսկ, ի՞նչ խորհուրդ ունի»։ Նրա խորին համոզմամբ հայ մանուկներն իրենց ժողովրդի պատմությունը պետք է ուսումնասիրեն ամենից առաջ մայրենի լեզվով։ Նազարյանցը պայքարում էր հանուն պատմագրության եվրոպականացման։ Այս հարցում նրա ամենամեծ ծառայությունը պետք է համարել այն, որ պայքարելով գրաբարամոլների դեմ, նա ծառանում էր պատմության կրոնական ըմբռնման դեմ։ «...Կաշխատենք նույնպես հեռի հալածել մեզանից և միտ դնել ավելի, ամփոփ և խելացի պատմաբանության,— գրում է Նազարյանցը,— ամենայն պատմական անցք հանդիման կացուցանելով որպես մի բնական զուգավորիչ օղ մի մեծ շղթայի, այսինքն տանելով և հասունացնելով յուրաքանչյուր իրողություն յուր պատճառներին և աղբյուրին, ուստի հառա-

---

4 Ստ. Նազարյանց (Պողոս Ղուկասյանց), Մի քանի խոսք, «Հյուսիսափայլ», 1860, № 2, էջ 495։

5 Նույն տեղում։

6 Ս. Նազարյանց, Երկեր, հ. 1, Թիֆլիս, 1913, էջ 40։

ջացել էր նա, և փախչելով ամենայն կրոնական նեղսրտությունից, որ վերացնելով ամենայն բարոյական ազատություն մարդու մեջ, սովոր է ամենայն տխուր անցք մի ազգային կյանքի մեջ ընծայել Աստծո պատժող գավազանին, փոխանակ բացահայտելու դորան պատմական պատճառներով և իրողությամբ»[7]։ Ակնհայտ է դառնում, որ հայ լուսավորիչը հասարակության զարգացման կամ որևէ պատմական իրադարձության մեկնաբանության ժամանակ անտեսում է աստվածային ամենազորության և ամենագիտության ավանդական պատկերացումները ու դրանք համարում է «կրոնական նեղսրտություն»։ Թեև «Հյուսիսափայլում» հրապարակած իր հոդվածներում (հատկապես «Հայաստան» և «Պատմություն հայոց ազգի») Նազարյանցը, գտնվելով անգլիացի Հ. Բոկլի ուսմունքի ազդեցության տակ, հետևում էր աշխարհագրական դետերմինիզմի տեսությանը, սակայն դա չէր խանգարում որ նա պատմությունը հռչակեր ոչ թե աստծո, այլ մարդու գործ՝ ոչ թե աստծուն, այլ մարդուն դարձնելով իր պատմության ու ճակատագրի տերը։ Հասարակության առաջադիմության ու նրա պատմության վերաբերյալ նման տեսակետը պետք է համարել համարձակ քայլ տվյալ պատմական ժամանակահատվածում, որովհետև գոյություն ուներ եկեղեցու կողմից դարեր ի վեր մշակված իշխող հայեցակետ։

Նազարյանցը հաճախ մոտենում էր հասարակական առաջադիմության օբյեկտիվ նյութական պատճառների ըմբռնմանը։ Նրա կարծիքով ողջ հասարակական կյանքի, ինչպես նաև պատմական առաջադիմության ու նյութական բարիքների ստեղծման բնագավառում մարդկության ձեռք բերած հաջողությունների շարժիչ ուժը հասարակական շահն է, կարիքը, «հարկավորությունը»։ Նազարյանցին մշտապես ուղեկցող միտքն այն էր, որ «հարկավորությունը» կարևոր դեր է խաղում հասարակության նյութական խնդիրների լուծման հարցում. «Ամենայն պիտույք մարդկային կյանքի մեջ ծնանում է և զորանում է, եթե կա հարկավորություն, հարցուխնդիր դորա մասին»[8]։ Նա գտնում էր, որ մարդկությունը չի մնացել իր վայրենության ասպիճանին, որովհետև նրան միշտ առաջ է մղել «հարկավորությունը»։ «Ինչ հրաշքներ հառաջացուցել է այդ հարկավորությունը,— գրում է Նազարյանցը,— մեր տունները և ապարանքները, այն ճարտարապետական մեքենայքը մանելու և հյուսելու այն կերպասեղենքը, որ սպասավորում են մեր մերկությունը ծածկելու, մեր մարմինը զարդարելու վայելչապես, այն հազարավոր գյուտերը և վերահասությունքը, որով մարդս դարձել է հրամայող տեր բնության վերա և գործ է դնում նորա բերքը և դորությունքը այնքան բազմօրինակ խորհուրդներով»[9]։ Հայ լուսավորիչը ընդունում էր «հարկավորության» նշանակալի դերը ոչ միայն հասարակության նյութական բարեկեցության, այլև «իմացական բարեկեցության» հարցերում։ Հենց սրանով էլ Նազարյանցը մոտենում էր հասարակական առաջադիմության օբյեկտիվ օրենքների ըմբռնմանը։

Հայտնի է, որ աշխատանքը կազմում է մարդկային կեցության նախահիմքը, որովհետև աշխատանքի շնորհիվ է մարդն առանձնանում կենդանական աշխարհից։ Ֆ. Էնգելսը «Բնության դիալեկտիկա» աշխատության մեջ ընութագրելով աշխատանքի դերը կապկի մարդացման պրոցեսում, գրել է. որ աշխատանքը «մարդկային ամբողջ կյանքի առաջին հիմնական պայմանն է.

---

7 Նույն տեղում, էջ 165—166։

8 Նույն տեղում, էջ 138։

9 Նույն տեղում, էջ 139։

և այն էլ այն աստիճան, որ մենք որոշ իմաստով պետք է ասենք՝ հենց աշխատանքն է ստեղծել մարդուն»[10]։

Նազարյանցը հասարակական առաջադիմության պրոցեսում նշում էր պատմական պրոցեսի վճռական գործոնի՝ մարդկանց գործունեության դերը։ Նա գտնում էր, որ հասարակական պահանջարկը հանգեցրել է տեխնիկայի կատարելագործմանը՝ ստեղծելով արտադրության ամենանուրբ և ամենաբարդ գործիքներ, որոնց օգնությամբ մարդը սկսեց իշխել բնության վրա։ Հենվելով իր ժամանակի առաջավոր փիլիսոփայական մտքի վրա, Նազարյանցը գտնում էր, որ վայրենին մարդ է դարձել աշխատանքի շնորհիվ և «մարդու ձեռքերը համարվում են նորա հառաջադիմության հոյակապ միջոցները»[11]։ Մարդու իշխանությունը բնության վրա վերջ չունի, քանի որ «կատարելության մի աստիճանը մարդուն տանում է մյուսին, ավելի բարձր կատարելության աստիճանի»[12]։ Այնուհանդերձ Նազարյանցը մարդկության պատմությունը, հասարակական առաջադիմությունը դիտում էր առավելապես մտքի, գիտակցության, հոգևոր կյանքի պատմության տեսանկյունով՝ ի հայտ բերելով իր պատմահայեցողության իդեալիստական բնույթը։ «Բայց պատմության իդեալիստական ըմբռնման սահմաններում Նազարյանցը խորապես գիտակցում էր, որ հասարակական առաջադիմության ճանապարհը հարթ չէ, ուստի և պահանջում է վիթխարի եռանդ, անհողդողդ կամք, ազնիվ սիրտ և լուսավոր լավատեսություն մարդկային ապագայի նկատմամբ»[13]։

Նազարյանը քաջ գիտեր, որ հինը հեշտությամբ զենքը ցած չի դնում և առանց պայքարի չի զիջում իր իշխանությունը։ «Հյուսիսափայլի» հրատարակողը «հանդեպ է գնալու մի փոթորկի,— գրում է Նազարյանցը,— տեսանենք խավա՞րը կհաղթի լուսին, թե՞ լույսը խավարին, միայն թե մեր ազգի մարդիկը ունենային այնքան բարոյականություն և ազնիվ պատվասիրություն (moralité et une noble ambition), որ չկամեին պատերազմել իմ հետ բռնակալության ճանապարհով, այլ պատվավոր զենքով, բայց պապականք ու ասիացիք այս գործի մեջ միասլես սովոր են ընթանալ, ուր պակաս է պատվավոր զենքը, որ միայն տեղիք ու հանդես ուներ լիտերատուրայի մեջ, այնտեղ կամին գործ դնել մի կոպիտ բռնակալության (un despotisme brutale)... պատերազմել պիտո է, և միաբանությամբ, այնուհետև հաղթությունը կլինի ձեր և մեր բաժին»[14]։ Իրավացի էր Նազարյանցը, երբ կարծում էր, թե նորը չի հաղթանակում առանց հին պատնեշը խորտակելու։ Այդ փաստը հիմնավորելու համար նա մեկ անգամ չէ, որ անդրադարձել է կաթոլիկության քննադատությանը, որը եվրոպական ժողովուրդների կյանքում գիտության, լուսավորության և նորի դեմ մղվող պայքարում տխրահռչակ դեր է խաղացել։ Նազարյանցի կարծիքով կրոնը, տարբեր հերձվածների, տարաձայնությունների պատճառով (որոնց հիմքում ընկած են մոլեկրոնությունը, սնոտիապաշտությունը, կույր հավատը) թշնամացնելով ազգերին իրար հետ, ոչ միայն խոչընդոտել է նրանց մերձեցմանը, այլև պատճառ է հանդիսացել բազմաթիվ

---

10 Ֆ. Էնգելս, Բնության դիալեկտիկա, Երևան, 1969, էջ 167։

11 Ս. Նազարյանց, Հանդես նոր հայախոսության, 2-րդ մաս, Մոսկվա, 1857, էջ 365։

12 Նույն տեղում, էջ 375։

13 Ռ. Կարապետյան, Ստեփանոս Նազարյանց, փիլիսոփայական հայացքները, Երևան, 1976, էջ 101։

14 Ս. Նազարյանց, Նամականի, էջ 203։

արյունահեղ պատերազմների, որ ընդհանուր ոչինչ չունի Քրիստոսի ուսմունքի հետ։ Սակայն այդ պատերազմները նա չի դիտում սոսկ կրոնական պատերազմներ, որովհետև «եթե Ավետարանը միայն բորբոքած լիներ այդ վեճը, որ մերկացուցել էր այնքան սուրեր, ապա այս աստվածեղեն գիրքը ունեցած կլիներ և կարողություն խաղաղեցնելու կռվողների սիրտը»[15]։ Կարելի է եզրակացնել, որ այս բախումների, պատերազմների պատճառը հայ լուսավորիչը տեսնում էր տարբեր հասարակական, սոցիալ-քաղաքական խմբավորումների շահերի և նպատակների մեջ։

XIX դարում, երբ եվրոպական ժողովուրդները նվաճել էին գիտության բարձունքները, հայ ժողովուրդը պետք է արթնանար իր լեթարգիական քնից և հետևեր եվրոպական լուսավորությանը, որովհետև այդ էր պահանջում ժամանակը։ «Մենք պիտի ծառայենք ժամանակին,— գրում է Նազարյանցը Հ. Լազարյանին,— ուշադիր հետևենք նրա ընթացքին, որպեսզի այն չոչնչացնի մեզ, ինչպես իր ուշացած երեխաների, որպեսզի չկլանվենք ծերունի Սատուրնի կողմից»[16]։ Ելնելով պատմական օրինաչափության ըմբռնումից, Նազարյանցը գտնում էր, որ բոլոր ժողովուրդներն էլ գնում են կամ պիտի գնան նույն ընդհանուր ճանապարհով։ Դա նշանակում էր, որ այն ճանապարհը, որի վրա ոտք էին դրել Եվրոպայի ժողովուրդները պատմական օրինաչափության թելադրանքով, անխուսափելիորեն պիտի անցնեն նաև մյուսները, այդ թվում նաև հայերը։ Նազարյանցի կարծիքով պատմական օրինաչափությունը բացառություն չի ճանաչում։

Հասարակական առաջադիմության պատճառը նա որոնում էր ոչ թե սուբյեկտիվ կամքի կամ համաշխարհային բանականության, նախախնամության մեջ, այլ հենց հասարակական զարգացման օբյեկտիվ օրենքների մեջ։ Հասարակության զարգացումը Նազարյանցը բացատրում էր նրա իսկ օրենքներով և օրինաչափություններով, որի հիմքում տեսնում էր հասարակական արտադրությունը։ «Առհասարակ, բոլոր աշխարհաշինությունը, բոլոր բարիքը, որ այժմ վայելում է մարդկությունս, թե՛ նյութական և թե՛ իմացական, գոյացել են ընկերության միաբան գործակցությամբ»[17]։ Բայց Նազարյանցը միաժամանակ գտնում էր, որ պատմական օրինաչափության գոյությունը դեռևս չի նշանակում, թե հասարակական զարգացումը առաջ կգնա առանց մարդկային գիտակցական գործունեության։ Նա չէր կասկածում, որ «մի ազգ ամենևին բարձիթողի արած, չէ կարող բարեկարգվիլ ինքն ըստ ինքյան, այլ պիտո է օր ըստ օրե վայրենանա, վատթարանա ու գազանանա։ Ամենայն աշխարհաշինություն գին է անթիվ ու անհամար աշխատանքների»[18]։ Նազարյանցը քննադատում է հոգևորականներին և նրանց նման մտածողներին, որոնք սպասում են, որ տերը կառուցի իրենց տունը և ձեռքերը ծալած սպասում են, որ «տունը ինքն ըստ ինքյան, մի աստվածային հրաշքով գլուխ գա»։ Չպետք է ամեն ինչ թողնել աստվածային հրաշքին, որովհետև մարդն օժտված է նաև բանականությամբ և ազատ կամքով, որպեսզի իր հանճարով և բարոյական ազատությամբ «բարեկարգի յուր թե՛ նյութական և թե՛ իմացական գրությունը, աշխատե և քրտնե շինելով յուր տունը»[19]։ Այսպիսով, պատմական առա-

15 «Հյուսիսափայլ», 1858, № 11, էջ 356։
16 Ս. Նազարյանց, Նամականի, էջ 74։
17 Ս. Նազարյանց, Երկեր, հ. 1, էջ 268։
18 Նույն տեղում, էջ 5։
19 Նույն տեղում։

ջադիմությունը նա ընդունում էր որպես հասարակական զարգացման օբյեկտիվ օրինաչափություն, որը իրագործվում է այդ հասարակության, մարդկանց ամենօրյա աշխատանքի, գիտակցական գործունեության, կամքի լարման և գործադրման միջոցով։ Նազարյանցը գտնում էր, որ մարդկանց այդ գործունեությամբ էլ հենց պայմանավորված է հասարակական զարգացման օբյեկտիվ ընթացքը։ Նորի, առաջավորի հաղթանակը նա տեսնում էր պայքարի մեջ, շարժման ու զարգացման պրոցեսում, ուրախություն էր հայտնում, «որ պատերազմ կա ազգի մեջ, որովհետև պատերազմով միայն կարող են առաքինքը հաղթության պսակը գրավել՝ պատերազմի մեջ կհայտնվին քաջքը և վատասիրտքը, ընտիրքը և անպիտանքը»[20]։

Այդ պայքարում Նազարյանցի քննադատական սուր խոսքն ամենից առաջ ուղղված էր գրաբարամոլների դեմ, որովհետև գրաբարամոլությունը ոչ միայն կանխում էր հայ ազգի առաջադիմությունը, այլև հեռու էր պահում հայ ժողովրդին եվրոպական լուսավորությունից։ Մինչդեռ ազգի հոգևոր ազդակը, առաջին «անոթը» նա համարում էր լեզուն. «Լեզուն, ժողովրդական լուսավորության ամենահզոր օրգանն է, լեզուն, ինչպես և գրականությունը, ամենանվիրական բանն է յուրաքանչյուր ազգի համար»[21]։ Ի դեպ, նշենք, որ այս միտքը Նազարյանցն արտահայտել է դեռևս 1843 թ. Հ. Լազարյանին գրած նամակում։ Չնայած իր «Վարդապետարանում» ազգը որոշող հատկանիշների շարքում, բացի լեզվից, նա հիշատակում էր նաև կրոնը, բայց մնացած բոլոր դեպքերում, թե՛ վաղ և թե՛ ավելի ուշ գրած նամակներում և աշխատություններում կրոնը չի ընդգրկում ազգի «հոգեղեն անոթների» թվում։ Իսկ «Հոգեբանության» մեջ գրում էր. «Յորոյ ազգի լեզու մտածէ և խօսի ոք, ի համարի ասի լինել նորին իսկ ազգի, և լեզու է՝ որ զատանէ ազգ յազգէ, ոպ դարձեալ՝ նա է՝ որ կապակցէ զմարդիկ յազգի»[22]։

Նազարյանցը հանդես եկավ կղերական այն մտայնության դեմ, ըստ որի կրոնը, հավատը դիտվում էր որպես ազգի պահպանության հիմք։ Հայ եկեղեցին, պնդելով այս տեսակետը, դրանով իսկ ցանկանում էր հավերժացնել և արդարացնել գրաբարի գոյությունը։ Սակայն գրաբարը անհասկանալի էր ժողովրդին և հասկանալի էր շատ փոքրաթիվ մարդկանց։ Հետևաբար, հայ եկեղեցին իր գրաբարով ինչպես անցյալում, այնպես էլ այժմ, կարող էր միայն խոչընդոտել գիտության, լուսավորության տարածմանը։ Ուստի հայ լուսավորիչը իր ժողովրդի վերածնունդը կապում էր նոր՝ աշխարհաբար լեզվի հետ։ Նազարյանցը գտնում էր, որ յուրաքանչյուր հայի համար իր լեզուն պետք է լինի մի սուրբ բան, իր աչքի լույսը, սրտի արյունը, իր կենդանության հիմքը և իր պատիվն ու պարծանքը։ Նրա համոզմամբ ոչ թե ազգն է կրոնի համար, այլ կրոնն է ազգի համար։

Նոր սերնդի շատ ներկայացուցիչներ գտնում էին, որ հայությունը ազգային առաջադիմության հարցում պետք է հետևի Եվրոպայի օրինակին։ Նազարյանցը և նրա համախոհները, անշուշտ, չէին ժխտում անցյալի հոգևոր ժառանգության դերը, բայց միաժամանակ գտնում էին, որ վերցնելով նրանից արժեքավորը, դրականը, պետք է այն զարգացնել եվրոպական լուսավորության օգնությամբ։ Եվ քանի որ հայ ժողովուրդն իր հոգևոր զարգացման տեսակետից շատ է ետ մնացել եվրոպական մեծ ու զարգացած ազգերից ու

20 Նույն տեղում, էջ 61։

21 Ս. Նազարյանց, Նամականի, էջ 75։

22 Ս. Նազարյանց, Յաղագս փորձական հոգեբանութեան ճառ, էջ Բ.։

կանգնած է նրանց կողմից կուլ գնալու վտանգի առջև, ուստի «Հյուսիսափայլի» խմբագիրը առաջարկում էր հայ ժողովրդի կյանքի բոլոր ոլորտների եվրոպականացում։ Նազարյանցի կարծիքով դա հրամայական պահանջ էր դարձել հայերի համար և դրան նպաստում էր մանավանդ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման պատմական իրադարձությունը։ «Հայոց ազգը այս բոպեումս երևում է կանգնած յուր բախտի դարձակետի վրա, մի այնպիսի գրության մեջ, որ պիտո է փոխվի դեպի լավը։ Ստրկության կապանքը հանած են Հայերի վերայից յուրյանց հայրենիքումը. նոքա կարող են այժմ շունչ առնուլ և արդեն կարելի է նկատել... թե նոցա մեջ զարթնել է մի սնուրանալի ձգտողություն սեփականելու յուրյանց Եվրոպայի իմացական կրթությունը։ ...Հայ ժողովրդի հայրենիքը այժմ ազատված է ստրկության լծից։ Նա կապված է մի եվրոպական, լուսավորություն ընդունող տերության հետ, ժողովրդի բոլոր իմացական զորությունքը կարող են այժմ ազատապես աճել և հզորանալ։ Եվրոպան բաց ու արձակ է Հայերի առաջև, նոքա կարող են մասնակից լինել նորա կրթությանը և լուսավորությանը»[23]։

Հետևելով իր նախորդների օրինակին՝ Նազարյանցը ցանկանում էր հայ ժողովրդին տանել եվրոպական լուսավորության ճանապարհով, բայց չէր նկատում այդ քաղաքակրթության բերած արատները։

Պահպանողական ուժերի դիմադրությունը հաղթահարելու համար պահանջվում էր պատերազմ վարել դրանց դեմ, որովհետև առանց պատերազմի «գարթնում չեն գիտության մուղայքը»։ Նազարյանցը գտնում էր, որ պայքարը, առաջադիմության համար մղվող «պատերազմները» «ճշմարտության անմեկնելի եղբարքն են, այո և հաղթության դրավականքը չափազանց կարևոր է մանավանդ մի այնպիսի ժողովրդի մեջ, որ հանկարծ տեսանում է հարյուրավոր տարիներով մութ ամպերի տակ ծածկած լուսի ճառագայթները, որ սկզբումը յուրյանց սաստիկ պայծառությամբ ծակում են շատերի աչքերը, անտանելի են նոցա։ Այս ևս բնական է, ըստ որում երեխան իսկույն կարող չէ աչքերը բանալ լուսի հանդեպ, ըստ որում դա դեռևս մի անսովորրան է նորա համար։ Բայց առ սակավ-սակավ ամրանալով երեխայի տեսողական կարողությունը, նա սովորում է նայել լուսին և ուրախանում է այն քաղցր աստվածեղեն պարգևի վերա, որից սկզբումը փախչում էր»[24]։ Այս պատկերավոր համեմատությամբ նա ցույց է տալիս, որ պայքարի պրոցեսում բացահայտվում և հաստատվում է գիտության հաղթանակը։ Նմանօրինակ առաջադիմական մտքերի համար Նազարյանցի դեմ ռեակցիան հետևողականորեն պայքարել է։ Բայց այդ պայքարը նա համարում է միանգամայն իզուր և անօգուտ, որովհետև «ժամանակի փոթորիկը ավելի զորեղ է, քան թե նրանց հուսահատության վերջին հնարները»։ «Դժվար է մեր ժամանակներում աքացել ընդդեմ խթանի. թագավորները անգամ անբավական են այդ մասին, և խոնարհում են ժամանակի պիտույքի և պահանջմունքի առաջև»[25]։

Ա. Մխիթարյանին 1859 թ. գրած նամակում Նազարյանցը ուրախություն է հայտնում, որ հայերի մեջ ավելանում է այն մարդկանց թիվը, որոնք սկսում են զգալ, ճանաչել ճշմարտությունը։ Նա կրկին պաշտպանում էր այն տեսակետը, որ ժամանակը պատերազմ է և յուրաքանչյուրը ըստ իր կարողությունների ու հնարավորությունների պետք է մասնակցի հնի ու նորի, ռեակ-

23 Ս. Նազարյանց, Երկեր, հ. 1, էջ 92—93։
24 «Հյուսիսափայլ» 1860, № 12, էջ 489—490։
25 Ս. Նազարյանց, Նամականի, էջ 242։

ցիայի ու առաջադիմության միջև մղվող պայքարին։ «Թող քաջությամբ գոտեվորին դոքա (իմա՝ ճշմարտության, առաջադիմության պաշտպանները— Ռ. Ա.) յուրյանց մեջքը. թող զրահավորեն յուրյանց բազուկը ճշմարտության վահանով, թող աներկյուղ ասպարեզ մտանեն պատերազմելու խավարի սպասավոր զինվորների հետ. թող վերջապես հասկանան, որ մեր կյանքը պատերազմ է. ոչ թե ունայն աշխարհական բանների պատճառով, այլ լուսավորություն, ճշմարտություն, ազգ ու եկեղեցի առաջադեմ կացուցանելու, և ինչքան շատ աշխատելու և քրտնելու էր մեր մեջ ամեն մինը, այնքան ևս մեծ և հոյակապ ասվելու է նորա վաստակը մարդկության այգիստանի մեջ։ Ասացեք այդ արժանապատիվ վարդապետներին իմ անունով, ասացեք ոչ թե լեզվով միայն, այլ և հոգով և սրտով, թե մեր ժամանակը պատերազմ է և կարոտ է անձնադիր նահատակների, ով տղամարդ է, ով զգում է յուր մեջ այրական հոգի, որի համար դեռևս կենդանի է հայրենիք ասած բանը, թող ժողովե և ամփոփե յուր զորությունքը հանդես մտանելու և վճռաբար գործ կատարելու. ամենևին անխտիր, անզգա մնալ անկարելի է. հարկավոր է կուսակցություն կամ աջակողմյան կամ ձախակողմյան դասի հետ. լինել ոչ այս և ոչ այն, ոչ միս և ոչ ձուկն, ինչպես ասում է առածը, կորուստ կբերի մեզ, ինչպես մինչև այժմ բերել է բազում մասնով և օրինակով»[26]։ Նազարյանցը և նրա համախոհները, առաջ տանելով ճշմարտության դրոշը, որոշեցին պատերազմել և հաղթել ռեակցիային, խավարին ու տգիտությանը կամ էլ քաջությամբ, սուրը ձեռքին ընկնել։ Իսկ հայ հասարակության քաղաքական հետամնացության պայմաններում բնական է, որ Նազարյանցի ու Նալբանդյանի հիմնադրած «Հյուսիսափայլը» ամսագիրը պետք է առանձնահատուկ նշանակություն ձեռք բերեր լուսավորության, գիտության տարածման գործում և հասարակական առաջադիմության համար մղվող պայքարում։ «Հյուսիսափայլը», ընդօրինակելով Աբովյանի լուսավորական գաղափարները և շարունակելով Մ. Թաղիադյանի «Ազգասեր» թերթի դեմոկրատական ավանդները, հանդիսացավ հայ իրականության հասարակական պայքարի նշանավոր ամբիոն։

XIX դարի 40—60-ական թթ. ինչպես Ռուսաստանում, այնպես էլ հայ իրականության մեջ հրապարակ իջան երկու հակադիր կուսակցություններ, որոնցից մեկի դրոշին գրված էր. «Շարժականություն դեպի առաջ, ընթացակցություն առաջադեմ ժամանակին, նորոգություն Ավետարանի բուսով. նորոգություն գիտության զորությամբ...», մյուսի վրա. «Ասիական անշարժություն, **վերադարձ** դեպի անմիտ տղայական օրեր, ոչինչ նորոգություն, ոչինչ վերաշինություն ազգային կյանքի—մի հայկական չինեականություն»[27]։ Նազարյանցը իրավամբ իրեն դասում էր առաջին կուսակցության մեջ և պայքարի սլաքն ուղղում էր հիմնականում կղերաֆեոդալական գաղափարախոսության, լուսավորությունն ու առաջադիմությունը «խափանող ու հալածող» ուժերի դեմ։ Չպիտի մոռանալ, սակայն, այն կարևոր հանգամանքը, որ նա հասարակական առաջադիմությունը, այնուամենայնիվ, պատկերացնում էր որպես սոցիալական զարգացման պրոցես։ Ի տարբերություն Միքայել Նալբանդյանի, որը հեղափոխական-դեմոկրատ էր և ընդունում էր ժողովրդական ապստամբությունների հեղափոխական մեծ ու վճռական դերը, լիբերալ Նազարյանցը գտնում էր, որ հասարակության զարգացումը հիմնականում տեղի

26 Նույն տեղում, էջ 208։
27 «Հյուսիսափայլ», 1961, № 1, էջ 2—3։

է, ունենում խաղաղ էվոլյուցիայի ճանապարհով, վերևից եկող բարենորոգումների միջոցով։

Ստեփանոս Նազարյանցը հաճախ է անդրադառնում կնոջ էմանսիպացիայի հարցին։ Նրա կարծիքով, կինը կարող է երջանիկ լինել ոչ միայն խորանալով «ճարտարության» դիտության և վաստակասիրության» մեջ տղամարդու հետ միասին, այլ «կանացի անձնվիրությամբ սիրելով ներգործում է կինը մարդկության վերա աղնվագործելով նորան, բախտավորելով գերդաստանը»[28]։ Սակայն կնոջ ստրկական վիճակը հայ իրականության մեջ հանգեցրել է այն բանին, որ «ադրի դատապարտելի անհոգությամբ և ոչ մինը նոցանից մինչև այսօր չէ ստացել այնպիսի դաստիարակություն և կրթություն, որ կարողանար օգուտ քաղել եվրոպական մատենագրությունից, ուսանել ինքը և ուսուցանել յուր զավակունքը»[29]։

Նազարյանցը ատելությամբ է խոսում նաև կնոջ արժանապատվությունը ստորացնող մի այնպիսի երևույթի մասին, ինչպիսին հարեմներն էին։ Այդ է վկայում նրա ցասկոտ քննադատությունը իսլամի հասցեին[30]։ Հայ լուսավորիչն ըմբոստանում էր նաև քրիստոնեության կողմից սրբազործվող բարոյականության դեմ։ Բանն այն է, որ Նազարյանցը քրիստոնեությունն ընկալում էր որպես ոչ թե մի սովորական կրոն, որն արդարացնում էր կնոջ ստրկացումը, այլ իբրև կնոջը ազատություն տվող ուսմունք։ Ըստ Նազարյանցի, դարեր շարունակ մատուցվել է քրիստոնեության ոչ թե իսկական էությունը, որն է սեր, այլ նրա արտաքին կողմը։ Այստեղ պարզ է դառնում, որ հայ լուսավորիչը կնոջ և հասարակական կյանքում նրա խաղացած դերի հարցերում ուներ պատրանքային պատկերացում։ Բայց և այնպես Նազարյանցը առաջ էր քաշում կնոջ հասարակական դերի ընդլայնման, կրթության, ազատության, մասնավորապես սերնդի դաստիարակության հարցերը։

«Հյուսիսափայլի» էջերում Նազարյանցի զետեղած նյութերից[31] պարզ է դառնում, որ նա ընդհուպ մոտեցել է կրոնի սոցիալական դերի ըմբռնմանը։ Հարվածն ուղղելով պապականների կողմից մատուցվող կրոնի դեմ, հայ լուսավորիչը վերջին հաշվով հանգում է կրոնի՝ որպես խեղճ մարդկանց դիտակցությունը թմրեցնելու միջոցի գաղափարին։ Կրոնը, նրա կարծիքով, «պապական դայակների» կողմից մարդկությանը տրվող քաղցր «օպիում» է, որը թմրեցնում է մտքերն ու զգայությունները։

Սակայն չենք սխալվի, եթե նշենք, որ Ստ. Նազարյանցը դեռևս 1858 թ. «Հյուսիսափայլի» 4-րդ համարում զետեղված «Ֆրանսիական ռևոլյուցիայի պատճառքը» հոդվածում չնայած քննադատում էր ֆրանսիական մատերիալիզմը, բայց միաժամանակ կարծես ակամա ընդունում էր նրա տեսակետը կրոնի պատրանքակոմպենսատորային սոցիալական ֆունկցիայի վերաբերյալ, երբ գտնում էր, որ կրոնը «ժողովրդի մեջ ոմանց սանձահարում էր, ոմանց մխիթարում էր և օգտակար էր ամենքին»[32]։

Կրոնը համարելով հոգևոր ճնշման մի տեսակ, Վ. Ի. Լենինը ցույց է տվել նրա կեղծ բարեպաշտականությունը ժողովրդի դիտակցությունը բթացնելու,

---

28 Նույն տեղում, 1862, № 2, էջ 70։

29 Նույն տեղում։

30 Նույն տեղում, 1861, № 10, էջ 281։

31 «Հյուսիսափայլ», 1858, № 6, էջ 476 (Մ. Նալբանդյան, Մխիթար և Մխիթարյանք)։

32 Նույն տեղում, № 4, էջ 283։

շահագործումը ուժեղացնելու և երկնային հատուցման հույսով խաբելու գործում։ «Կրոնը հոգևոր ճնշման մի տեսակ է,— գրում է Լենինը,— որ ամենուրեք և ամեն տեղ ծանրացած է ուրիշների համար հավետ աշխատող, կարիքի ու մենակության տակ ճզմված ժողովրդական մասսաների վրա։ Շահագործողների դեմ մղած պայքարում շահագործվողների անզորությունը նույնպես անխուսափելիորեն հանդերձյալ լավագույն կյանքի հավատ է ծնում, ինչպես բնության դեմ մղած պայքարի մեջ վայրենու անզորությունն աստվածների, սատանաների, հրաշքների և այլ բաների հավատ է ծնում։ Ով իր ամբողջ կյանքում աշխատում է ու կարիքի մեջ է, կրոնը նրան երկրային կյանքում հեզություն և համբերություն է ուսուցանում, մխիթարելով նրան երկնային հատուցման հույսով։ Իսկ նրանց, ովքեր ուրիշների աշխատանքով են ապրում։ կրոնը բարեգործություն է ուսուցանում երկրային կյանքում, նրանց արդարանալու շատ էժանագին միջոց առաջարկելով իրենց շահագործական ամբողջ գոյության համար, և ձեռնտու երկնային բարեկեցության տոմսեր ծախելով»[33]։ Քանի որ Նազարյանցի ապրած դարաշրջանում, պատմական այդ պայմաններում հասարակության առաջընթացը հիմնականում կապված էր կղերական-պահպանողական գաղափարախոսության դեմ մղվող պայքարի հետ, այդ իսկ պատճառով Նազարյանցի ազատախոհությունը իր ժամանակի համար, մանավանդ հայկական իրականության մեջ, ուր եկեղեցին դեռևս ուժեղ դիրքեր ուներ, առաջադիմական քայլ էր մարդկանց մտքերը լուսավորելու գործում։

СТЕПАНОС НАЗАРЯНЦ О СОЦИАЛЬНОМ ПРОГРЕССЕ

Р. А. СААКЯН

(Резюме)

Развитие общества Ст. Назарянц рассматривал как закономерный процесс. Выступая против богословских концепций фатализма и провиденциализма, Назарянц защищал идею активной сущности человека, способного познать и соответственно изменить окружающий мир. Он отрицал роль духовенства в просвещении народа, последовательно и настойчиво подчеркивая разрушительное влияние католицизма на общественную жизнь, науку и культуру народов.

---

33 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 10, 1949, էջ 92—93։